ԱԶԻԶԲԵԿՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԳԵՂԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

XIV—XV դդ. Եղվարդում և նրա շրջակայքում իշխում էին Ազիզբեկյան իշխանական տան ներկայացուցիչները։ Ազիզբեկյանների իշխանության սահմանները արևմուտքում տարածվում էին մինչև Քասախ գետը, հյուսիսում՝ Քասախ գետով մինչև Արայի լեռը, արևելքում՝ Թեղենյաց սարից բխող դետակը, իսկ հարավում՝ մինչև Նոր Դեղի և նրան հարող շրջանները։

Ազիզբեկյանների ծագման մասին հավաստի գրավոր տեղեկություններ չկան։ Ըստ Զաքարիա սարկավագի՝ Ազիզբեկյանների նախահայր Ազիպեն մի քանի այլ հայտնի վրացի անձանց հետ պատանդ է եղել Հայաստանում։ Այդ պատանդներից են առաջացել մի շարք իշխանական տներ. Թեիենենք՝ Օհանավանքում, Մոծակենք և Ղապոնք՝ Քանաքեռում, Ազիզբեկյանները՝ Եղվարդում[1]։ Զաքարիա Քանաքեռցին գրում է, որ ինքն այս պատմությունը լսել է բանավոր պատմողներից և որ միակ գրավոր աղբյուրը, որ կարող էր հավաստել նրա գրածը, մի հիշատակարան է, որը, սակայն, երկրաշարժի ժամանակ կորել է[2]։ Մեծանուն հայագետ Գարեգին Հովսեփյանը Ազիզբեկյանների վրացական ծագման մասին Զաքարիա սարկավագի վարկածը համարել է առասպել և գիտական ճշմարտությունից զուրկ։ Նա գտել է, որ Ազիզբեկյան իշխանական տունը կազմավորվել է Զաքարյանների իշխանության շրջանում[3]։ Զաքարիա սարկավագի վարկածը ճշտելու ուղղությամբ մեր պրպտումները որևէ արդյունք չտվեցին։ Դա ևս վկայում է Զաքարիա սարկավագի վարկածի փաստազուրկ լինելը։

Սկզբնաղբյուրներում Թեիենենք, Մոծակենք և Ղապոնք որպես իշխանական տներ չեն հիշատակվում։ Կարևոր է նաև այն հանգամանքը, որ իրենց թողած արձանագրություններում և հիշատակարաններում Ազիզբեկյանները ոչինչ չեն հիշատակում իրենց վրացական ծագման մասին։

Ազիզբեկյանների մասին առաջին գրավոր հիշատակությունը 1318 թ. Եղվարդում գրված մի հիշատակարան է, որը Ներսես գրիչը գրել է պարոն Ազիզբեկի և նրա տիկնոջ՝ Վախախի խնդրանքով։ Հիշատակարանից իմանում ենք, որ Ազիզբեկի հայրը եղել է պարոն Ավագը, մայրը՝ Թամարը, իսկ նրա կինը՝ Վախախը, Խար Ասլանի դուստրն էր[4]։ Պարոն Ավագով էլ, որը, հավանաբար, եղել է Զաքարյանների զորավարներից մեկը, թերևս սկսվում է Ազիզբեկյանների իշխանական տոհմածառը։

Ավագ Ա-ի մահից հետո իշխանական տան ներսում առաջացած խռովության պատճառով Ազիզբեկ Ա-ն իր կնոջ հետ որոշ ժամանակ ստիպված հեռացել է Եղվարդից, բայց հետո կարողացել է վերացնել ներքին երկպառակությունը, վերադառնալ Եղվարդ և տիրանալ հայրենի կալվածքներին[5]։ Այնուհետև Ազիզբեկ Ա-ն վերանորոգել է ավերված ավանը. «Եկեալ տեսին զբնակութիւն նոցայ աւերեալ և կործանեալ, և զաւանս իւրեանց զԵղիվարդ բնակութիւն

---

1 «Զաքարիայ սարկավագի Պատմագրութիւն», հ. 3, Վաղարշապատ, 1870, էջ 43—44,

2 Նույն տեղում։

3 Գ. Հովսեփյան. Ազիզբեկենք և նրանց ջինարարական գործը («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի»), գիրք Ա—Բ, 1921—1922, էջ 178։

4 «Ամ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 142։

5 Նույն տեղում, էջ 140։

աւազակաց... և վերստին նորոգեցին ըստսայ բազում տգնութեամբ և չարաչար վրտանկաւք, մի մի ժողովել զցրուեալսն, բազում և յոլով աշխատութեամբ ծառայութիւն կատարելով մեծափառ տէրանց իւրեանց՝ մեծին Շահինշահի և եոյանդզային, և հեզաբար և հնազանդաբար շրջէին ընդ նոսայ, մինչև ամենայն դիմաւք հաստատեցին զմեծ մենաստանս զԵղիվարդ, շինել զամենայն քանդեալս»[6]։ Ազիզբեկ Ա-ն, ինչպես վկայում է Ներսես գրիչը, քաջ զորական է եղել և մեծ համբավ է վայելել[7]։ Նա վերաշինել է Եղվարդի ավերված ջրանցքը։ Ներսես գրիչը հաղորդում է, որ Ազիզբեկ իշխանն ուխտ է գնում Արայի լեռան հյուսիսային լանջերին գտնվող Աստվածընկալ եկեղեցին, տեսնում է հին՝ ավերված ջրանցքը, որի միայն հետքերն էին մնացել։ Հաղթահարելով տեղանքի դժվարությունները, նա վերակառուցում է այն և ջուրը հասցնում Եղվարդ ու նրա շրջակայքը։ Քասախ գետից ջրանցքն անցնում էր Արայի լեռան ժայռոտ լանջերով, որը պահանջում էր մեծ աշխատանք ու ծախսեր և, ինչպես գրիչն է պատմում, այնքան շատ էին դժվարությունները, կատարած աշխատանքը և ծախսերը, որ հնարավոր չէր գրի առնել[8]։ Ազիզբեկ Ա-ն վերաշինում է նաև Եղվարդի ս. Հակոբ եկեղեցին և նրան նվիրում շատ այգիներ[9]։

Ազիզբեկ Ա-ն ունեցել է չորս որդի և մեկ դուստր։ Նրա որդիներն էին Ավագը, Հովհաննեսը, Սարանդինոսը և Ասանթանն[10]։ Ազիզբեկ Ա-ին հաջորդել է անդրանիկը՝ Ավագ Բ-ն, որն ունեցել է երկու որդի՝ Ազիզբեկ Բ և Զաքարիա։ Ազիզբեկ Բ-ն հորը հաջորդել է XIV դ. երկրորդ կեսին, որը պարզվում է 1367 թ. Բշնիում Մանվել Ա եպիսկոպոսի գրած մի գանձի բովանդակությունից։ Նա նշում է, որ ինքը ժամանակակից է եղել Ազիզբեկ Բ-ին, որին նաև կոչել են Եղվարդյան.

«Իսկ մերձաւորն իմոյ արեան,
Զմեծն Ազիզբեկ Եղիվարդեան,
Ու Աւաքն որդի եւ Զաքարայն,
Եւ ըզթոռնունքն իւր միաբան»[11]։

Մանվել Ա եպիսկոպոսը այսպես է գրել իր և Ազիզբեկ Բ-ի ազգակցական կապի մասին։ Հասկանալի է, որ նա նկատի ունի Ազիզբեկ Բ-ին, քանի որ, ինչպես տեսանք, Ազիզբեկ Ա-ն ուներ չորս որդի՝ Ավագ, Հովհաննես, Սարանդինոս և Ասանթանե, իսկ Ազիզբեկ Բ-ի որդիներն էին Ավագը և Զաքարիան։

Ազիզբեկ Բ-ն և իր որդի Ավագ Գ-ն կրթական գործի մեծ հովանավորներ էին ու պատահական չէ, որ XIV դ. վերջին և XV դ. սկզբին Եղվարդը դարձել էր կրթական կենտրոն, ուր լայն գործունեություն էր ծավալել Սիմոն վարդապետ Այրիվանեցին։ Նա Եղվարդում գործել է 10 տարի՝ 1394—1404 թթ.[12]։ Սիմոն վարդապետը զբաղվում էր ոչ միայն մանկավարժական գործունեությամբ, այլև իր աշակերտների հետ ընդօրինակում է տասնյակ ձեռագրեր։ Ազիզբեկ Բ-ի մահից հետո Սիմոն վարդապետի սկսած գործը հովանավորեցին նրա որդիները՝ Ավագ Գ-ն և Զաքարիան, իսկ նրանց մահից հետո՝ Մանվել Գ-ն՝ Ավագ Գ-ի որդին[13]։ Որ, իրոք, Ազիզբեկյանները հովանավորում և նյութապես օժանդակում էին դպրոցական գործին և ձեռագրեր գրելուն, վկայում են մի քանի ձեռագրերի հիշատակարաններ։ Այսպես. 1318 թ. մի հիշատակարանում Ներսես գրիչը խոսում է նաև այն հոգատարության մասին, որ իր նկատմամբ

---

6 Նույն տեղում։
7 Նույն տեղում, էջ 139.
8 Նույն տեղում, էջ 141։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, էջ 142։
11 «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», դիրք Ա—Բ, էջ 204։
12 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 195։
13 Նույն տեղում։

ցուցաբերել են Ազիզբեկ Ա-ն և իր կին Վախախը[14]։ 1444 թ. Այրիվանքում գրված հիշատակարանում գրիչը Սիմոն վարդապետի գործունեության մասին պատմելիս գրել է. «Նախ բնակեցաւ յաստուածաշէն և ի տիրախնամ գեղն Եղիվարդ, ի փոքր վանս, որ ի մէջ գեղին, և բազում արդիմս արարեալ անդ ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտ, մեծազգի և փառաւոր, աղքատասէր, ազատածին առն Ազիզպէկին և որդւոց նորին՝ Աւագին և Զաքարիային։ Բազում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ ժողովեալ յուսուցանել զհինն և զնոր մատեան աստուածաշունչ գրոց, զսուրբ և զարտաքին փիլիսոփայութիւն՝ ամս տասն»[15]։

Ազիզբեկ Բ-ն իշխել է մինչև XIV դ. վերջերը. համենայնդեպս նա կենդանի էր մինչև 1394 թ., երբ այստեղ իր մանկավարժական գործունեությունը սկսեց Սիմոն վարդապետը։ Ավագ Գ-ն ամենայն հավանականությամբ հորը հաջորդել է XV դ. սկզբին։ Նման ենթադրություն անելու հիմք է տալիս վերը բերված հիշատակարանը, ուր, ինչպես արդեն տեսանք, ասվում է, որ Սիմոնի գործունեությունը Եղվարդում հովանավորում էին Ազիզբեկ Բ-ն և իր որդիները՝ Ավագն ու Զաքարիան։ Տեսանք, որ Սիմոն վարդապետը Եղվարդում գործել է 1394—1404 թթ.։ Հետևապես Ավագ Գ-ն 1404 թ. առաջ է հաջորդել հորը։ Թե մինչև երբ Ավագ Գ-ն վարեց իշխանությունը և ինչպիսի գործունեություն ծավալեց, այդ մասին սկզբնաղբյուրներում դեռևս հիշատակությունների չենք հանդիպում։

XV դ. առաջին կեսին Ազիզբեկյաններին վերաբերող միակ գրավոր տեղեկությունը Ազիզբեկ Բ-ի կրտսեր որդի Զաքարիայի՝ 1425 թ. Հովհաննավանքում թողած արձանագրությունն է՝ գրված Մուղնի գյուղը գնելու և ս. Կարապետ վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ։ Ահա այդ արձանագրությունը. «Թվ. ՊՀԴ/ կամաւն անմահին Այ. ես Զաքարիա թոռն Դամրիկէլին եւ որդի պար Ազիզբեկին/ գնեցի զգեղն Մողնի հալալ յարդեաց իմ/ոց։ Սբ. Դէորգայ մուտքն սբ. Կարապետի/ս էր, զիմ բաժինն էլ սբ. Կարապետիս տվի/ յիշատակ ինձ և ծնողաց իմոց»[16]։ Հավանաբար, 1425 թ. առաջ Ավագն արդեն մահացել էր։ Հակառակ պարագային Զաքարիան նրա անունն արձանագրությունում կը-հիշատակեր որպես իր մեծ եղբոր և տան ավագի։ Կարծում ենք, որ 1425 թ. մինչև 1450-ական թվականները իշխանությունը վարել է Զաքարիան։ Գ. Հովսեփյանը հիշյալ արձանագրության մեջ հիշված Զաքարիային Ազիզբեկ Բ-ի որդի համարելն անհիմն կասկածի տակ է առնում[17]։ Սակայն բանն այն է, որ Դամրիկելը, ինչպես ճիշտ նկատել է Գ. Հովսեփյանը, Վաչուտյաններից է և Զաքարիայի պապը մոր կողմից[18]։ Եվ քանի որ Մուղնի գյուղը գտնվում էր Վաչուտյանների իշխանության տակ, որոնցից Դամրիկելը Զաքարիայի պապն էր, ապա արձանագրության մեջ նա հիշվում է որպես տեղի իշխաններից մեկը։

Զաքարիայից հետո Ազիզբեկյանների մոտ ևս աշխարհիկ իշխանությունն իր դիրքերը զիջել է հոգևորին։ Այստեղ էլ կրոնական վեղարն էր, որ պետք է զորավիգ լիներ հայ ֆեոդալներին՝ իրենց ունեցվածքը փրկելու մահմեդական նվաճողների ընչաքաղցությունից։ Օրեցօր սաստկացող այս վտանգն էր պատճառը, որ Ազիզբեկյան իշխանական տան մեջ XV դ. երկրորդ կեսից սկսած վեղար կրողներն ավելի մեծ հեղինակություն ու դիրք էին ձեռք բերում։

Ազիզբեկյան ֆեոդալական տան իշխանությունը XV դ. երկրորդ կեսից մինչև դարի վերջը վարում էր Ավագ Գ-ի որդին՝ Մանվել արքեպիսկոպոսը,

---

14 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 142։

15 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան. Երևան, 1955, էջ 561։

16 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 102։

17 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 196։

18 Նույն տեղում։

որը հայտնի է Մանվել Գ անունով։ Նրա մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է 1452 թ.։ Այս թվականին Մանվել Գ-ն մի երգարան է գնել, որի հիշատակարանում հաղորդում է, թե ինքը պարոն Ավագի որդին է, պարոն Ազիզբեկի թոռը[19]։ Մանվել Գ արքեպիսկոպոսի մասին հաջորդ տեղեկությունը տալիս է Մաթևոս գրիչը՝ 1464 թ. Եղվարդում գրած մի ձեռագրի հիշատակարանում. «Արդ, գրեցաւ սա ի գաւառիս Արարատեա, ի գեղաքաղաքիս Եդիվարդ... յառաջնորդութեան տեղւոյս տէր Մանուէլի արհեպիսկոպոսի, որդի պարոն Ավագի և թոռ պարոն Ազիզբեկին»[20]։ Ինչպես պարզվում է հիշատակարանի բովանդակությունից, Մանվել արքեպիսկոպոսը հովանավորել և օժանդակել է Մաթևոս գրչին՝ ձեռագրեր ընդօրինակելու գործում։ Մաթևոս գրիչը, որը Եղվարդում լայն գործունեություն էր ծավալել, 1465 թ. Ազիզ անունով մի կնոջ համար գրչագրել է մի ավետարան, որի հիշատակարանում հիշատակել է նաև Նորգեղիի տանուտերերին[21]։ Սրանք Գ. Հովսեփյանի ենթադրությամբ կամ ազգակցական կապ ունեին Ազիզբեկյանների հետ, կամ նրանց ենթակա ազնվականներից էին[22]։ Սակայն մեր կարծիքով, եթե Նորգեղիի տանուտերերը Ազիզբեկյանների ազգակիցը լինեին, ապա այդ մասին գրիչը անպայման կհիշատակեր։ Ընդունելի է Գ. Հովսեփյանի այն միտքը, որ Նորգեղիի տանուտերերը վասալական կախման մեջ էին Ազիզբեկյաններից։ 1469 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում Մանվել Գ արքեպիսկոպոսի հետ հիշատակված է նրա եղբայր Բեշքենը[23]։ Գ. Հովսեփյանը վերապահությամբ է ընդունում սրանց եղբայր լինելը և ենթադրում է, որ Բեշքենը կարող է Օրբելյաններից լինել[24]։ Սակայն տարակուսելու տեղիք չկա, մանավանդ, որ գրիչը Մանվելի և նրա եղբոր կապակցությամբ գրում է. «յառաջնորդութեան վանիցս նմին տէր Մանուէլի և եղբարն Բիշքէնի»[25]։ Այս նույն Բեշքենը Հովհաննավանքում թողել է մի արձանագրություն, որում չի նշում իր տոհմական պատկանելությունը, սակայն մեր խորին համոզմամբ, եթե նա Օրբելյան տոհմից լիներ, ապա անպատճառ կնշեր այդ հանգամանքը։ Մինչդեռ նա բավարարվել է հետևյալով՝ «Սբ պատար/ագողք Քի զԲեշգեն եւ/ ծնողսն/ իւր յիշեցեք ի Քս. ամէն»[26]։

1469 թ. Եղվարդում գրած ձեռագրի հիշատակարանում գրիչ Մաթևոսը հայտնում է, որ ինքն այն գրել է Եղվարդում՝ տեր Մանվել եպիսկոպոսի համար, նրա առաջնորդության ժամանակ[27]։ Մանվել Գ-ն 1471 թ. Եղվարդի եկեղեցում արձանագրություն է թողել ս. Աստվածածնին՝ Աշտարակում այգի և ջրաղաց նվիրելու կապակցությամբ. «Ես Մանուել եպիսկոպոս որդի պարոն Աւագին, թոռն պարոն Ազիզբեկի, ետու զիմ այգին Աշտարակ, որ է Ազիզեան, եւ ջաղաց իմ, որ է տէղն բնական վանիցս, եւ հաստատեցի սբ. աստուածածնիս՝ թվ ՋԻ (1471)»[28]։ Մանվել Գ Ազիզբեկյանի մասին վերջին տեղեկությունը

---

19 Նույն տեղում։

20 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 215։

21 Նույն տեղում, էջ 232։

22 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 197։

23 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 198։

24 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 197։

25 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 198։

26 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 79։ Արձանագրությունը թվական չունի, Կ. Ղաֆադարյանը այն վերագրել է XIII դարին։ Կարծում ենք, որ արձանագրությունը թողել է XV դ. երկրորդ կեսին ապրած Ազիզբեկյան Բեշքենը։

27 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 283։

28 Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 173, Հ. Շահխաթունյան, Ստորագրութիւն Կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 126։

հաղորդում է գրիչ Վրթանես կրոնավորը Արարատյան գավառի Ուրց անապատում՝ 1491 թ. գրած ձեռագրի հիշատակարանում[29]։

XV դ. վերջից մինչև XVI դ. երկրորդ կեսը Ազիզբեկյանների մասին սկզբնաղբյուրներում հանդիպում են կցկտուր տեղեկություններ, որոնք, սակայն, առայժմ հնարավորություն չեն ընձեռում ուրվագծելու ֆեոդալական այս տան ներկայացուցիչների հետագա գործունեությունը։ Ինչպես վերն ասվեց, Ազիզբեկյաններից էին Բշնիի Մանվել Ա և Մանվել Բ եպիսկոպոսները։ Մանվել Ա եպիսկոպոսի մասին առաջին տեղեկությունը գտնում ենք 1367 թ. Սանահնում գրված մի շարակնոցում։ Մանվել Ա-ն գրել է գանձեր, որոնցում տեղեկություններ է հաղորդում իր պապի, ծնողների և Ազիզբեկ Բ-ի հետ նրանց ունեցած ազգակցական կապի մասին։ Նա գրում է, որ իր հայրը՝ Շապուհը սերում է ազատ տոհմից.

«Մանուէլ զհամբակս այս անարժան,
Եպիսկոպոս տրուպս անպիտան,
զաշորդ Բշնոյ ու Արարադեան,
Եվ Վիրապին սբ զտեղապան։
Այլ եւ ըզիմն ածանման,
Զտեր Վաննական Արհիական
Որ կայ տրքնեալ այժմ ի տապան,
Ցիշեք յաղաւթս մաքրական։
Նա եւ առնէք յիշման արժան,
զմեր մարմնական ղծընողքն արեան,
զհայրն իմ Շապուհ յաղատ տոհմեան,
զմայր իմ Ջանխաթուն բարի անուան,
Ու որք քան զսոքա յառաջեալ կան։
զպապ անուանելքըն մեր բնական
զթայինս Արշուկ Զաքարիայն
Քրիստոս հանգչի հոգիս նոցայն։
Իսկ մերձաւորն իմոյ արեան,
զմեծն Ազիզբէկ Եղվարդեան,
Ու Աւաքն որդի եւ Զաքարայն,
Եւ ըզթոռնումոնք իւր միաբան,
. . . . . .
Այլեւ յիշեմ ըզմանկական,
զեղբաւր որդիքն իմ ծիածան
զփոքրն Սարգիս զմեծ Զաքրյն,
Որ կու փայլեն ըստ հարցն անուան
. . . . . .
Թվիս ութ հարիւր եւ վեշտասան,
Երեալ եւ ծաղկեալ այս բուրաստան,
Յովհաննէսի գրչի ձեռամբ»[30]։

Մանվել Ա-ին Հովհաննես գրիչը հիշում է «Մանուէլ Գերհռչակեալ» անունով, որն ունեցել է հզոր իշխանություն՝ «իշխան եւ իշխեցող ի վերայ երկոտասան վիճակաց» և մեծ հեղինակություն։ Մանվել Ա-ն հմուտ է եղել փիլիսոփայության մեջ և հորինել է երաժշտություն[31]։ Այս ամենը վկայում է, որ նա եղել է ժամանակի զարգացած մարդկանցից մեկը։ Մանվել Ա-ն մահացել է 1368 թ.։ Այս թվականին Սանահնում գրած ձեռագրի հիշատակարանում Մելիքսեթեկ

29 Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն Գ, Երևան, 1967, էջ 170։

30 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 203—205։

31 Նույն տեղում։

ծաղկողը հայտնում է. «Յիշեցէք ի մաքրափայլ եւ յերագընթաց յաղօթս ձեր զստացող գրոցս զտէր Մանուէլ, որ ստացաւ զսայ հալալ յարդեանց յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, եւ ի կատարել գրոցս գրելով ինքն փոխեցաւ առ Քրիստոս»[32]։ Ն. Ակինյանը գտնում է, որ այս հիշատակարանը գրվել է 1428 թ.։ Այս կարծիքն ընդունելու դեպքում շփոթ է առաջ գալիս Մանվել Ա-ի և Մանվել Բ-ի անձերի շուրջը։ Մեր կարծիքով վերը վկայակոչված ձեռագիրը Սանահնում 1367 թ. Մանվել Ա-ի պատվերով ընդօրինակել է Հովհաննես գրիչը և ծաղկել է Մելիքսեթեկը։ Նման եզրահանգման գալու համար մեզ կոված են ծառայել հետևյալ փաստերը։ Նախ, 1367 թ. Մանվել Ա-ի ստացած գանձում հիշվում են նրա եղբոր որդիները՝ Սարգիսը և Զաքարիան[33]։ Սանահնում ընդօրինակված Աստվածաշնչում ևս Սարգիսն ու Զաքարիան հիշվում են որպես Մանվելի հարազատներ. «Զամենաիմաստ եւ զերջանիկ արքեպիսկոպոսն զտէր Մանուէլ, զմեծափափակ տենչմամբ ցանկացող զԱստուածաշունչ տառիս, հանդերձ հարազատովքն իւրովք՝ Զաքարիաւ և Սարգսիւ աղաչեմ 'յիշել ի Տէր»[34]։ Գրիչը նկատի ունի խնդրո առարկա Մանվել Ա-ին և նրա եղբոր որդիներին՝ Սարգսին և Զաքարիային։ Այնուհետև Մելիքսեթեկ ծաղկողը հայտնում է, թե այդ թվականին Մանվելը մահացել է, իսկ Աստվածաշունչը մնացել է տեր Հովհաննեսի ձեռքում, որը մանուկ էր «հասակաւ եւ չի ամենայն առաքինութեամբ»[35]։ Այստեղից հետևում է, որ 1367—1368 թթ. հիշատակարաններ և գանձեր գրող Հովհաննեսը չէր կարող 1428 թ. լինել հասակով մանուկ։ Որ իսկապես այդ հիշատակարանը գրվել է 1368 թ., ապացուցում է նաև Մելիքսեթեկ ծաղկողի չափածո հիշատակությունը՝

«Առնել յիշման զիս արժանի,
Զմեղամակարթս յոյժ եղկելի
Զմելիքիսեթեկ վա[տ]թարս, մեղօք ի լի,
Որ եմ ծաղկող այսմ տառի,
Նայ եւ էր թիւն տումարին
Ութհարիւր հայկեան ազգին,
Տինայ է տասն յաւելուածին,
Այլ եւ եաթն շարամանին»[36]։

Այսինքն՝ 800+10+7=817+551=1368. այս թվականն են ընդունել Հ. Տաշյանը, Գ. Հովսեփյանը և Լ. Խաչիկյանը։ Այդ կարծիքը վերը բերված փաստերի հիման վրա համարում ենք ճիշտ և ընդունելի։ Ն. Ակինյանը այս թվականը կարդացել է Հ+Ճ+Օ+Ժ+Է, այսինքն՝ 800+70+7=877+551=1428[37]։ «Տինայ է տասն յաւելուածին» տողում «Է»-ն մեր կարծիքով օժանդակ բայն է, որը, սակայն, Ն. Ակինյանը կարդացել է 7, ապա բազմապատկելով 10-ով ստացել է 70, որը ճիշտ չէ։ Այս ամենից հետո կարելի է եզրակացնել, որ Մանվել Ա-ն մահացել է 1368 թ.։

Մանվել Ա-ին հաջորդել է Վանական Գ-ն, որի միայն մահվան թվականն է մեզ հայտնի։ Թ. Մեծոփեցին ու Գ. Խլաթեցին հայտնում են, որ 1387 թ. Լանկ-Թամուրը գրավեց Բշնին և սպանեց Վանական եպիսկոպոսին[38]։ Վանական Գ-ից հետո Բշնիի եպիսկոպոսական աթոռը նորից անցնում է Ազիզբեկյաններին, և

---

32 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 484։
33 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 204։
34 «Հանդես ամսօրյա», 1958, էջ 373։
35 Նույն տեղում, էջ 372։
36 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 48։
37 «Հանդես ամսօրյա», 1953, էջ 374։
38 «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմայ վարդապետի Մեծոփեցւոյ», Փարիզ, 1860, էջ 19։ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 275։

Բջնիում 1388—1390 թթ. միջոցին եպիսկոպոս է դառնում Մանվել Բ Ազիզբեկյանը։ Մանվել Բ-ի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 1406 թ.։ Ն. Շնորհալու «Ընդհանրականի» 1294 թ. ընդօրինակած ձեռագրի վերջում Մանվել Բ-ն 1406 թ. գրել է. «Զանբաժս ի բարեաց եւ զանշեղս ի չարեաց զհանդիպոզս այսմ հայրենական եւ կանոնական սահմանադրութեանս, զտէր Մանուէլ նուաստ եպիսկոպոս Բըշնոյ եւ Այրարատեան նահանգի, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր... թվ. ՊՄԵ» (1406)[39]։ Մանվել Բ-ի անվանը հանդիպում ենք նաև 1414 թ. Օշականում գրված մի ճաշոցի հիշատակարանում. «... յիշեսջիք ի Քրիստոս ըզտէր Մանուէլն արհեպիսկոպոս Բըշնոյ և Արարատեան, և զտէր Յովաննէս, որք բազում աշխատութեամբ աւգտակարք եղեն աստուածաշունչ տառիս...»[40]։ Թե մինչև երբ ապրեց Մանվել Բ-ն և ինչպիսի գործունեություն ունեցավ հետագայում, առայժմ դժվարանում ենք ասել։ Ն. Ակինյանը գրում է, որ Մանվել Բ-ն մահացել է 1426—1427 թթ. միջոցում[41], սակայն, ինչպես վերը տեսանք, դա հիմնավոր եզրակացություն չէ։

Այսպիսով, Ազիզբեկյանները XIV—XV և հետագա դարերում իշխում էին Եղվարդում. նրանք իրենց ձեռքն էին վերցրել նաև Բջնիի եպիսկոպոսությունը, և եթե XIV դ. իշխանական տունը աչքի էր ընկնում Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում, ապա XV դ. թուլացել էր, և դարի երկրորդ կեսից նրա կառավարումն անցել էր հոգևոր առաջնորդներին։

К ВОПРОСУ О КНЯЖЕСКОМ ДОМЕ АЗИЗБЕКЯНОВ

ГЕГАМ КИРАКОСЯН

Резюме

Сопоставительным изучением письменных первоисточников уточняется история княжеского рода Азизбекянов в XIV—XV вв., выявляется их деятельность в области строительства и культуры.

В XIV—XV вв. Азизбекяны правили в Егварде, в их руках находилось также епископство в Бджни. Если в XIV в. княжеский дом занимал видное место в политической жизни Восточной Армении, то в XV в. он постепенно теряет свое влияние и со второй половины этого столетия правление им переходит в руки духовных предводителей.

39 «Հանդէս ամսօրյա», 1958, էջ 372—373։

40 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 162։

41 «Հանդէս ամսօրյա», 1958, էջ 374։